Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-290-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 172-րդ հոդվածի 3.2.-րդ մասում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարուցված քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 125.1-րդ հոդվածով, 131-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 154.2 հոդվածով, 154.9 հոդվածով, 168-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 181-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 182-րդ հոդվածով, 188-րդ հոդվածով, 188.1-րդ հոդվածով, 189-րդ հոդվածով, 189.1-րդ հոդվածով, 190-րդ հոդվածով, 190.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 190.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 191-րդ հոդվածով, 192-րդ հոդվածով, 193-րդ հոդվածով, 194-րդ հոդվածով, 200-203-րդ հոդվածներով, 205-րդ հոդվածով, 207-րդ հոդվածով, 213-րդ հոդվածով, 214-րդ հոդվածով, 215.1-րդ հոդվածով, 216-րդ հոդվածի 3-րդ մասով, 217-րդ հոդվածով, 217.1-րդ հոդվածով, 218-րդ հոդվածով, 219-224-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածով, 235.1-րդ հոդվածով, 261-րդ հոդվածով, 262-րդ հոդվածով, 266-րդ հոդվածով, 267.1-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 275-րդ հոդվածով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-314.3-րդ հոդվածներով, 332-րդ հոդվածով, 336-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով, 375-րդ հոդվածով քննվող քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող

հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Կ-290-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011/1 ԵՎ Կ-290[1]-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011/1 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-290-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության և 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 172-րդ հոդվածի 3.2. մասում՝

1) առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարուցված քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:».

2)լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 125.1-րդ հոդվածով, 131-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 154.2 հոդվածով, 154.9 հոդվածով, 168-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 181-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 182-րդ հոդվածով, 188-րդ հոդվածով, 188.1-րդ հոդվածով, 189-րդ հոդվածով, 189.1-րդ հոդվածով, 190-րդ հոդվածով, 190.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 190.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 191-րդ հոդվածով, 192-րդ հոդվածով, 193-րդ հոդվածով, 194-րդ հոդվածով,

200-203-րդ հոդվածներով, 205-րդ հոդվածով, 207-րդ հոդվածով, 213-րդ հոդվածով, 214-րդ հոդվածով, 215.1-րդ հոդվածով, 216-րդ հոդվածի 3-րդ մասով, 217-րդ հոդվածով, 217.1-րդ հոդվածով, 218-րդ հոդվածով, 219-224-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածով, 235.1-րդ հոդվածով, 261-րդ հոդվածով, 262-րդ հոդվածով, 266-րդ հոդվածով, 267.1-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 275-րդ հոդվածով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-314.3-րդ հոդվածներով, 332-րդ հոդվածով, 336-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով, 375-րդ հոդվածով ~~հարուցված~~ քննվող քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը, ~~-~~եթե միջնորդությամբ ներկայացվել են ~~ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի,~~ արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող: ~~Այս դեպքում դատարանի որոշման պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց կամ քրեական գործի վարույթը սույն օրենսգրքի 261-րդ հոդվածով սահմանված կարգով կարճելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, ում վերաբերյալ ստացվել են տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:»:~~ –

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-290-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011/1), ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-290[1]-23.09.2019,11.11.2019-ՊԻ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	2.		3.	4.	5.

1.	**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**	**Նախագծի 1-ին հոդված**	**Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «հարուցված» բառը փոխարինել «քննվող» բառով:**	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.		**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)**	**Առաջարկվում է Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ հոդվածով՝** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.		**Նախագծի** **1-ին հոդված**	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով լրացվող պարբերությունից հանել «ծանրակշիռ, քրեական գործի նյութերից բխող վերաբերելի» բառերը: Բացի այդ, առաջարկվում է հանել «Այս դեպքում դատարանի որոշման	Ընդունվել է: Հիմք ընդունելով առաջարկությունները՝ լրացվող պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի	Ընդունվել է:

			պատճենը քննիչը ոչ ուշ, քան քրեական գործը սույն օրենսգրքի 272-րդ հոդվածով սահմանված կարգով դատախազին ուղարկելուց կամ քրեական գործի վարույթը սույն օրենսգրքի 261-րդ հոդվածով սահմանված կարգով կարճելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված այն անձին, ում վերաբերյալ ստացվել են տեղեկությունները: Նշված որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով:» նախադասությունները:	Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 112-րդ հոդվածով, 125.1-րդ հոդվածով, 131-րդ հոդվածի 2-րդ մասով և 3-րդ մասով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 133-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 154.2 հոդվածով, 154.9 հոդվածով, 168-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 179-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 181-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 182-րդ հոդվածով, 188-րդ հոդվածով, 1881-րդ հոդվածով, 189-րդ հոդվածով, 189.1-րդ հոդվածով, 190-րդ հոդվածով, 190.1-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 190.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 191-րդ հոդվածով, 192-րդ հոդվածով, 193-րդ հոդվածով, 194-րդ հոդվածով, 200-203-րդ հոդվածներով, 205-րդ հոդվածով, 207-րդ	

				հոդվածով, 213-րդ հոդվածով, 214-րդ հոդվածով, 215.1-րդ հոդվածով, 216-րդ հոդվածի 3-րդ մասով, 217-րդ հոդվածով, 217.1-րդ հոդվածով, 218-րդ հոդվածով, 219-224-րդ հոդվածներով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածով, 235.1-րդ հոդվածով, 261-րդ հոդվածով, 262-րդ հոդվածով, 266-րդ հոդվածով, 267.1-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 275-րդ հոդվածով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-314.3-րդ հոդվածներով, 332-րդ հոդվածով, 336-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով, 375-րդ հոդվածով քննվող քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ չներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ,	

				«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի՝ հսկող դատախազի համաձայնությամբ և գլխավոր դատախազի կամ նրա տեղակալի կողմից հաստատված միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող	

				հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:»:	
4.		**Նախագծի 1-ին հոդված**	**Առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.** Հարուցված քրեական գործերով դատարանը պատճառաբանված որոշմամբ բավարարում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			առգրավում կամ խուզարկություն կատարելու թույլտվություն տալու քննիչի միջնորդությունը, եթե միջնորդությամբ ներկայացվել են արժանահավատ և բավարար տվյալներ այն մասին, որ վերը նշված տեղեկություններն անհրաժեշտ են գործով էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար, և դրանք ողջամտորեն հնարավոր այլ եղանակով պարզվել չեն կարող:		
5.		**«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ**	**Առաջարկվում է «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.** «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ»	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2 մասի 2-րդ պարբերությամբ սահմանված դեպքերում» բառերը: Ըստ այդմ՝ փոփոխության ենթարկել նաև օրենքի նախագծի վերնագիրը:		